

ՀԱԳԻՈԳՐԱՖԻԱԿԱՆ ԺԱՆՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ՍՐԴԻ ՎԻՃԱԿԸ

ՀՀ ԴԱԱ ակադեմիկոս Վ. Ս. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Ինչպես հայ, այնպես էլ քրիստոնյա մյուս աղգերի հին և միջին դարերի գրականության ժանրերից են վարքագրություններն ու վկայաբանությունները, որոնք մի ընդհանուր անունով սրբախոսություններ (հագիոգրաֆիա) են կոչվում: Այդ ստեղծագործությունները հսկայական դեր են կատարել ոչ միայն քրիստոնեական կրոնի բարոյաբանական սկզբունքները ժողովրդի մեջ տարածելու և արմատավորելու գործում, այլև կարևորություն են ունեցել միջնադարյան մարդու գեղագիտական պահանջմունքներին հագուրդ տալու առումով: Եթե սրան ավելացնենք նաև այն, որ փաստորեն այդ ժանրերի ընդերքում են ստղծնավորվել նոր գրականության «փոքր» արձակի որոշ տեսակները (պատմվածք, գրույց, նովել և այլն), ապա պարզ կլինի սրբախոսությունների նշանակալի արժեքը առհասարակ ամեն մի քրիստոնյա ժողովրդի գրականության համար:

Հայկական վարքերի ու վկայաբանությունների ուսումնասիրության հիմքը դրեցին Վենետիկի մխիթարյանները: Այս մարզում առանձնապես զնաստուի ծառայություն են մատուցել մխիթարյան նշանավոր բազմաշխատ հայրերը՝ Մկրտիչ Ավգերյանն ու Ղևոնդ Ալիշանը: Ավգերյանը տակավին 1810—1815 թթ. 12 հատորով հրատարակեց «Լիակատար վարք և վկայաբանութիւնք» մատենաշարը, ուր տեղ գտան մինչև XIII դարի ինչպես հայ, այնպես էլ թարգմանական երկերը՝ համապատասխան մեկնաբանություններով: Իսկ Ալիշանը 22 հատորիկով լույս աշխարհ բերեց հանրահայտ «Սոփեր հայկականքը» (1853—1861), երկուական հատորով հրատարակեց «Վարք սրբոց հարանց և քաղաքավարութիւնք նոցին» (1855) և «Վարք և վկայաբանութիւնք սրբոց հատընտիր քաղեալք ի ճառընտրաց» (1874) ժողովածուները: Սրբախոսական հուշարձանների բնագրերի հրատարակման ու նրանց ուսումնասիրման գործում արդյունաշատ է եղել նաև Գալուստ Տեր-Մկրտչյանի, Հակոբ Մանանդյանի, Հրաչյա Աճառյանի, Գարեգին Հովսեփյանի գործունեությունը: Բայց որքան էլ ըստ արժանվույն բարձր գնահատենք հիշյալ գիտնական այրերի երախտիքը, այնուամենայնիվ պարտավոր ենք նշել, որ նրանց մոտ ժանրերի ուսումնասիրությունը կրում էր սոսկ աղբյուրագիտական-բանասիրական բնույթ, որ համապատասխանում էր ժամանակի գիտության մակարդակին և ինքնին, իհարկե, մեծ կարևորություն ուներ: Ազգային սրբախոսական գրականության՝ գրականագիտական հայեցակետով հետազոտության սկիզբը կապված է մեծանուն հայագետ Մ. Արեղյանի անվան հետ, որը, սակայն, իր «Հայոց հին գրականության» I հատորում հասցրեց տալ միայն երկու նշանավոր հուշարձանների՝ Շուշանիկ-Վարչենիի և Վահան Գողթնացու վկայաբանությունների վերլուծությունները, որոնք իրենց գեղագիտական նորը ճաշակով, բովանդակության խորությամբ իսկական շափանմուշ կարող են համարվել ժանրի ուսումնասիրության գործում: Ասածին պետք է ավելացնել նաև Կորյունի «Վարք Մաշտոցի» ռուսերեն թարգմանության՝ Կ. Մելիք Օհանջանյանի առաջաբանը, ինչպես նաև Մ. Ավդալբեկյանի «Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը (V դար)» արժեքավոր մեծագրության համապատասխան հատվածները, որոնց մեջ հետազոտողները

հաջողությամբ փորձում են նոր հայեցակետով մոտենալ հայոց հին և միջին դարերի գրականության խնդրո առարկա ժանրերի գիտական մեկնարանությունը՝ այդ ժանրերի ստեղծագործությունների մեջ որոնելով ու հայտնաբերելով հայոց հնագրայան դպրության մեջ պատմական և գեղագիտական մտածողության՝ ցայդ չվերծանված ու պատշաճ ձևով չգնահատված նոր շերտեր: Հենց սրանով էլ պայմանավորված է վերը նշված աշխատությունների արժեքը ազգային սրբախոսական ժանրերի ուսումնասիրության նոր շրջափուլի տեսակետից: Սակայն այս ամենը մեծ գործի սկիզբն էր միայն: Հայ սրբախոսական ժանրերի տիպարանական համակողմանի ուսումնասիրությունը, նրանց գիտականորեն հիմնավորված պատմությունն ու տեսությունը՝ արդի գրականագիտության պահանջների պատշաճ մակարդակով տակավին մնում էր (և իր շատ էական կողմերով ևս շարունակում է մնալ) որպես արդի հայագիտության կատարելիքներից մեկը:

Վերը հիշված հայագետների հետևողությամբ, շարունակելով ու զարգացնելով ժանրերի ուսումնասիրության ավանդները, ինչպես նաև օգտագործելով մասնագետների (հատկապես ռուս) փորձը, պրոբլեմի հետազոտմանը նպատակադիր ձևով նվիրվեց բանասեր-գրականագետ Քնարիկ Տեր-Դավթյանը: Նա ջանադրոհեն զբաղվում է հայկական վարքերի ու վկայաբանությունների ուսումնասիրությամբ, տեքստերի ռուսերեն թարգմանություններով ու հրատարակումով՝ համապատասխան առաջաբաններով, մեկնաբանություններով ու ծանոթագրություններով: Հեղինակը այս տարիների ընթացքում հրատարակել է 5 գիրք, իսկ գիտական պարբերականներում ու ժողովածուներում՝ պրոբլեմի զանազան հարցերին նվիրված շուրջ երկու տասնյակ ծանրակշիռ հոդվածներ: Հիշենք միայն առանձին գրքերով հրատարակությունները. «Памятники армянской агнографии» ժողովածուն (1973), «XI—XV դարերի հայ վարքագրությունը» մեկագրությունը (1980), «Источники по истории высших школ в средневековой Армении» (1983), «Армянские жития и мученичества V—XVII вв.» (1994) սովոր ժողովածուն և «Հայելի վարուց»-ի քնական բնագիրը (1994):

Անտարակույս է հեղինակի թվարկված ու մյուս աշխատությունների այժմեականությունն ու կարևորությունը հայ հին և միջնադարի գրականության գիտական պատմության ամբողջացման առումով: Փաստ է, որ ոչ միայն հայ, այլև մյուս ժողովուրդների սրբախոսական հուշարձանները մինչև ոչ հեռավոր անցյալը դիտվել են որպես գերազանցապես պատմական սկզբնաղբյուրներ և, եթե նկատի չունենանք առանձին բացառություններ, նրանք զրկված ուշադրության չեն արժանացել գեղարվեստական գրականության պատմության, գեղարվեստական զարգացման հայեցակետով: Կարելի է ասել, որ այժմ աստիճանաբար վիճակը շտկվում է, բայց պրոբլեմին վերաբերող շատ հարցեր տակավին կարոտ են դիտական խոր լուսաբանության:

Եվ ահա այն տարիներին ոչ բազմափորձ բանասեր խիզախաց՝ ռուսերեն լեզվով հրատարակելով իր անդրանիկ գործը՝ «Памятники армянской агнографии» ժողովածուն՝ համապատասխան ներածական հոդվածներով ու մանրամասն ծանոթագրություններով:

¹ Այստեղ ավելորդ ենք համարում անդրադառնալ տեքստան աշխատանքով զբաղված այդ ուշագրավ գրքի ողիսականին և չենք ուզում վերհիշել այն տխուր ժամանակները, երբ անգամ բավական զարգացած գիտական ֆունկցիոներ այրերից ոմանր ոչ միայն սխալ, այլևս վնասակար համարեցին այդ գրքի հրատարակությունը: Բայց եզան և մարդիկ, որոնք պաշտպան կանգնեցին նոր սկսված լավ գործին, խոսքով ու գործով սատարեցին հեղինակին՝ հայագիտության նորոգ ավանդների ոգով շարունակելու, ճիշտ հունով տանելու հայ հոգեոր մշակույթի մի ամբողջ բնագավառի գիտական ուսումնասիրությունը, որով, կարելի է ասել, որ մեր անցյալի դպրության որոշ էական երևույթներ ստանում են իրենց իրական մեկնաբանությունը:

«Памятники армянской агнографии» ժողովածուն բովանդակում է դրարար բնադրերից թարգմանված, V—XV դարերի մի շարք նշանավոր մշակութային գործիչներին նվիրված 6 վարք, իսլապես նաև հավատի ու հայրենիքի համար նահատակված 11 երևելի անձանց վկայաբանություններ: Գրքի սկզբում ղեկավարված առաջաբանում հեղինակը տվել է հայ սրբախոսական գրականության ընդհանուր հակիրճ բնութագիրը, փորձել է բացահայտել նրա ուղղային յուրահատկությունները, ընթացքի օրինաչափությունները և այլն: Նկատառնք, ի դեպ, որ նույն սկզբունքներով է կազմված նաև հեղինակի հրատարակած «Армянские жития и мученичества V—XVII вв.» ժողովածուն, որը, սակայն, ոչ միայն շատ ավելի հարուստ է իր ընդգրկած նյութով (այն բովանդակում է 20 ընտրանի վարք և 23 նույնպիսի վկայաբանություն), այլև կարելի է ասել, որ այստեղ հեղինակը հմտորեն օգտագործել է տարիների ընթացքում հարստացրած գիտելիքներն ու կուտակած ստեղծագործական փորձը: Մի տեսակ ամփոփիչ-հասնագումարային նշանակություն ունեցող այս նոր ժողովածուի մեջ հեղինակը ընդարձակել է սրբախոսական գրականության ուսումնասիրման շրջանակները, ճշտել ու խորացրել է վարքագրական ու վկայաբանական ժանրերի հուշարձանների բնութագրությունները՝ շեշտը դնելով ոչ միայն նրանց աղբյուրագիտական արժեքի, այլև գեղարվեստական յուրահատկությունների ու արժանիքների բացահայտման վրա: Այս նոր աշխատության մեջ արդեն մենք գործ ունենք հայկական վարքերի ու վկայաբանությունների գնահատման երկու ասպեկտների՝ տիպարանականի և աղբյուրագիտական-բանասիրականի ներդաշնակ զուգակցման հետ, որը և տվել է իր ակնառու գիտական արդյունքները:

Այսպես է, իրոք, ռուսերենով հրատարակված այս ուշագրավ ժողովածուի պատմաճասաչողական, գեղարվեստական, ինչպես նաև գիտական արժեքը: Նրա շնորհիվ օտարազգի ընթերցողը հնարավորություն է ստանում ի մոտո ծանոթանալու հայոց անցյալի մեծերի՝ հոգևոր մշակույթի, կրոնական, քաղաքական ու հասարակական ասպարեզի երևելի դեմքերի կյանքի պատմությանը, հաղորդակցվելու նրանց առաքինի կենցաղավարությանը, սրբակրոն վարքին, հայրենանվեր գործունեությանը և այլն: Ընդհանրապես՝ այս ամենը վարքագրական ժանրի համար սահմանված կանոններով շարադրված հյուսվածքներով:

Այս ժողովածուի երկրորդ կեսը նվիրված է հայկական վկայաբանական ստեղծագործություններին, որոնց ռուսերեն թարգմանությունները ևս կատարված են հմտությամբ ու ճաշակով, լեզվաոճական կոլորիտի պահպանումով: Այդ ստեղծագործությունները՝ իրենց գաղափարին ու համոզմունքներին անսահմանորեն նվիրված նահատակների զորեղ կերպարներով, մարդկային ճակատագրերի ուժգին բախումներով, դրամատիկական սուր կոնֆլիկտներով հայոց հին և միջնադարյան գեղարվեստական արձակի լավագույն նմուշներից են և անկասկած կարևոր դեր են կատարել ժամանակին մարդկանց գեղագիտական ճաշակը մշակելու, ազգային գեղարվեստական մտածողության զարգացման գործում: Ժանրի լավագույն ստեղծագործություններից հիշենք մեծ հայրենասեր Վարդան Մամիկոնյանի դստերը՝ Շուշանիկին, Վահան Գողթնացուն, Դավիթ Դվնեցուն, Համազասպին ու Սահակին, Խոսրով Գանձակեցուն, Հովսեփ Դվնեցուն, Գրիգոր Բալուեցուն, Թամար Մոկացուն, Վարդան Բաղիշեցուն, Հիմար Վանեցուն նվիրված վկայաբանական ստեղծագործությունները:

Ք. Տեր-Դավթյանի աշխատությունների մի դրվատելի կողմն այն է, որ հայ սրբախոսական ժանրերի ուսումնասիրությունը նա տանում է ոչ թե հայ դպրության զարգացման ընդհանուր պրոցեսից կտրված, այլ՝ ազգային հասարակական-քաղաքական կյանքի և գրականության ընդարձակ հետախորդի վրա, որը և նպաստել է հեղինակին որոշելու այդ ժանրերի տեղն ու դերը ազգային դպրության, պատմագիտական մտքի ու գեղարվեստական մտածողության զարգացման պրոցեսում, միաժամանակ բացահայտելով այն

առանձնահատուկ ազգայինը, որ հայ սրբախոսական նշանավոր հուշարձանները բերել են ընդհանուր քրիստոնեական գրականության մեջ:

Հետաքրքրական է, որ ռուս գիտական գրականության մեջ, անգամ մինչև այսօր էլ, «Житийная литература» ձևակերպման տակ հաճախ առանց տարբերակելու հասկացվում են և՛ վարքագրությունները, և՛ վկայաբանությունները: Դժվարանում ենք ասել, թե որն է այս երևույթի պատճառը: Այնինչ տակավին միջին դարերում հայ իրականության մեջ մենք հանդիպում ենք վարքերի ու վկայաբանությունների միանգամայն հստակ տարբերակված ժանրային սահմանումներին, որ գտնվում ենք «Յայսմավորք» ժողովածուների կազմողների ու խմբագրողների՝ Հովսեփ Կոստանդնուպոլսեցու (X դար) և Տեր-Իսրայելի (XIII դար, սրա ս համարում են Վանական վարդապետի աշակերտը) մոտ: Վերջինս, ինչպես կարծում են, գրեթե նույնությամբ կրկնողով է իր նախորդին, այսպես ձևակերպելով այդ սահմանումը. «Բայց գիտել պարտ է, թէ այն, որ ասէ յիշատակ՝ միայն յիշատակ է սրբոց. զոր պատմութիւնն յիշէ վասն պիտոյից, իսկ այն, որ ասէ վարժ՝ զայն յայտ առնէ, թէ առաքինութեամբ և հաճոյական վարուք ճգնեալ սուրբքն հանգեան ի Քրիստոս, իսկ որ ասէ վկայաբանութիւն յայտ է թէ արեամբ նահատակեալ սուրբքն վկայութեամբ կատարեցան ի Քրիստոս»:

Փաստն ինքնին շատ հետաքրքրական է և պերճախոս վկան այն բանի, որ տակավին հեռավոր անցյալում հայերը ջանացել են տալ այդ ժանրերի բավական հստակ տեսական բնութագիրը, որ իր գիտական արժեքը պահպանել է նաև հետագայում:

Շեշտելով հանդերձ հայկական վարքերի ու վկայաբանությունների բնական ընդհանրությունները քրիստոնյա այլ ժողովուրդների համանման գրական տեսակների հետ, Ք. Տեր-Դավթյանը միաժամանակ տևդին մատանաշում է նաև հայկականի երկու կարևոր առանձնահատկություն. ա) Հայ սրբախոսական գրականությունը օժտված է առավել ընդգծված պատմական բովանդակությամբ, քան ասենք, նույնիսկ բյուզանդականը. բ) Հայկական սրբախոսական գրականությանը, մասնավորաբար վկայաբանական ստեղծագործություններին բնորոշ է շեշտված ազգային-ազատագրական միտվածքն ու ոգին: Հեղինակն այս կարևոր առանձնահատկությունները իրավացիորեն բացատրում է հայ ազգային կյանքի յուրատեսակ հանգամանքներով. նվ իսկապես, եթե բյուզանդական գրականության մեջ քրիստոնեության արմատավորումից հետո վկայաբանություններն աստիճանաբար նվազում են՝ իրենց տեղը զիջելով վարքագրական ստեղծագործություններին, ապա հայ իրակաության մեջ, որի մշտական ուղեկիցն է եղել ալլադավաճ օտարի կրոնական անազորույն հալածանքների ու տիրապետության դեմ ուղղված ազատագրական հարատև մաքառումը, վկայաբանության ժանրը շարունակում է բարգավաճել՝ ընդհուպ մինչև ուշ միջնադար: (Մենք ժանրի զարգացման սահմանը կհասցնեինք մինչև XVIII դարի վերջը, մինչև Սայտթ-Նովայի՝ ավանդություններ մեզ հասած նահատակության պատմությունը):

Կարևոր է հիշել, որ հայ սրբախոսությունների առավել աչքի ընկնող հուշարձանների ստեղծումը կապված է գլխավորապես աղղային կյանքի բնկումնային եղելությունների հետ (հայոց դարձ, ազգային գրերի գյուտ, ազատագրական մաքառումի փայլուն դրվագներ և այլն), որով ավելի ևս շեշտվում է նրանց պատմամշակութային ու կրոնաքաղաքական հնչողությունը, ավելի հստակ է ընդգծվում նրանց նշանակությունը հայության տղային ինքնության պահպանման, նրա գոյատևման առումով:

Սրբախոսական ժանրերի լրջամիտ ուսումնասիրության շնորհիվ հեղինակին հաջողվել է բացահայտել նոր շերտեր հայ միջնադարյան դեղարվեստ-

2 Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն II, կադմեց Լ. Ս. Նալբանդյան. Երևան, 1955, էջ 1437: Ի դեպ, այս սահմանումը իր մի աշխատության մեջ հիշատակում է Ք. Տեր-Դավթյանը՝ Տե՛ս Հայ միջնադարյան գրականության ժանրեր. Երևան, 1984, էջ 39—40:

տական մտածողության մարզում, որոշ էական ճշտումներ կատարել հայ ազգային հոգեոր կյանքի, մասնավորապես գեղարվեստական գրականության փնտռատման շափանիշների մեջ:

Սրբախոսական գրականության ժանրերի հետ ամենասերտ աղերսներն ունեն դանադան տիպի խրատաբարոյախոսական ժողովածուները, որ այնքան լայն տարածում են ունեցել միջնադարյան Հայաստանում: Այս առումով բնական է Ք. Տեր-Պավլյանի հետաքրքրությունը նման բնույթի ժողովածուներից մեկի նկատմամբ: Հեղինակի վերջին գործն է նրա աշխատասիրության մեջ լույս տեսած «Հայելի վարուցը»՝ հայ դասական տեքստաբանության ավանդների ոգով իրականացված մի աշխատանք: Առաջին հայացքից կարող է թվալ, թե այս աշխատության հեղինակը «շեղվել է» իր նախասիրած հիմնական ուղուց, բայց զա առաջին հայացքից միայն: «Հայելի վարուցը», համաշխարհային գրականության այդ նշանավոր երկը, հետաքրքրաշարժ ու հոգեհաճ խրատների ու զրույցների ժողովածուն, իր ներքին էությունով, իր մեջ բովանդակված բարոյախրատական զրույցներով ըստ էության սերտորեն առնչվում է հայ սրբախոսական գրականությանը, յուրովի լրացնում այն:

Դիրքը բաղկացած է քննական տեքստից, տարրաթերցվածքների ու ծանոթագրությունների ընդարձակ բաժիններից, զրույցների ցանկից և հավելվածից: Դրքի սկզբում գետնի վրա ծավալուն առաջաբանում աշխատասիրողը քննարկում է ժողովածուի հայերեն թարգմանության հետ կապված բանասիրական-բնագրագիտական կարևոր հարցերը, բնութագրում է հուշարձանի գեղարվեստական առանձնահատկությունները, բացահայտում է «Հայելի վարուցի» և ուշ միջնադարի թարգմանական գրականության առնչությունները, տալիս է նրա ձևագրերի նկարագրությունը և այլն: Հեղինակի իրավացի դիտումով «...բազմաթիվ զրույցներ և ամբողջ գլուխներ այդ ժողովածուից թափանցել են առական գրքերի, քարոզգրքերի, վարձագրական երկերի և այլ տիպի ժողովածուների մեջ, մտել են հայ բանավոր խոսքարվեստ, տեղայնացել և հաճախ միաձուլվել են հնուց արդեն հայ մատենագրությանը հայտնի սյուժեների հետ և ընկալվել որպես սեփական» («Հայելի վարուց», էջ 9):

Հայտնի է, որ ուշ միջնադարի թարգմանական գրականությունը վատ է ուսումնասիրված, այնինչ այդ գրականության հետազոտությունը կարևոր է ոչ միայն հայ միջնադարյան դպրության պատմությունը ամբողջացնելու, արևմտաեվրոպական և արևելյան գրականությունների՝ հայկականի վրա թողած ազդեցությունը անհրաժեշտ խորությամբ վեր հանելու, գիտականորեն չհիմնավորված մեկնաբանությունները մեթոծելու տեսակետից, այլև շատ հետաքրքրական է միջնադարից դեպի նոր գրականություն անցման շրջանի գեղարվեստական զարգացման յուրահատկությունները ըստ ամենայնի լուսաբանելու առումով:

Հեղինակի ուշադրությունը գրավել է «Հայելի վարուցի» թարգմանության բնագրի լեզվի հարցը: Հուշարձանի լատիներեն, լեհերեն և հայերեն տեքստերի համեմատական քննությամբ ու նոր տվյալներով նա հաստատում է Գ. Տեր-Մկրտչյանի՝ ժամանակին առաջ քաշած վարկածը՝ հուշարձանի լեհերենից թարգմանված լինելու մասին, որով վերջնականապես մերժվում է Ակինյանի կարծիքը, որը գտնում էր, թե թարգմանության բնագիրը լատիներենն է եղել: Հեղինակը կարողացել է համոզիչ փաստերով ճշտել թարգմանության թվականը՝ 1651 (թարգմանիչ՝ Ստեփանոս Լեհացի):

Առանձնակի կարևորություն ունի «Հայելի վարուցի» տեղայնացման, ըստ էության Ստեփանոս Լեհացու ձեռքով նրա հայկական տարբերակի ստեղծման խնդիրը, որը ևս հեղինակը քննարկել ու լուծել է հաջողությամբ (տե՛ս «Հայելի վարուց», էջ 26—29): Հիշենք, որ խնդրի բարդությունը կապված էր այն հանգամանքի հետ, որ այս ժողովածուն կաթոլիցիզմի ոգով ներթափանցված մի երկ էր և այդքան էլ դյուրին չէր գտնել կաթոլիցիզմից այն «զերծելու» բանալին: Առանձնակի դրվատանքի է արժանի «Հայելի վարուցի»՝ մեծ խնամքով կազմված քննական բնագիրը և հուշարձանին կցված

ծանոթագրությունների հարուստ բաժինը: Մանրակրկիտ կերպով ծանոթանալով հուշարձանի ձեռագրերին, որոնց քանակը հասնում է 68-ի, աշխատասիրողը նպատակահարմար է գտել (և ճիշտ է վարվել) տեքստ կազմելիս օգտագործել դրանցից միայն 14-ը, իսկ մյուս 54 ընդօրինակությունները, իր խոսքով ասած, նկատի է ունեցել «զանազան հարցերի ճշգրտման համար»: Փաստերի նույն խելամիտ վերլուծությամբ Ք. Տեր-Գալթյանը բացահայտում է «Հայելի վարուցի» և աշխարհի այլ ժողովուրդների (Եվրոպական, հնդկական, եգիպտական) համանման ստեղծագործությունների հետ ունեցած շփման եզրերն ու զուգահեռները, որով ամբողջանում է տեղայնացված այս հետաքրքրական էրական հուշարձանի ուսումնասիրությունը: Մանրագրությունների բաժնում հեղինակը հետաքրքիր փաստեր է բերում նոր գրականության մեջ «Հայելի վարուցի» սյուժեների մշակման վերաբերյալ: Հետաքրքրական են նաև հեղինակի պրպտումները «Հայելի վարուցի» աղբյուրների հայտնաբերման ուղղությամբ:

Մեր ասելիքն ավարտելուց առաջ հարկ ենք համարում վերստին շեշտել հայկական սրբախոսական ժանրերի՝ վարքերի ու վկայաբանությունների հետագա խորացած ուսումնասիրության կարևորությունը, մի խնդիր, որ մեր կարծիքով արդի հայագիտության էական պրոբլեմներից է: Հայկական սրբախոսական ճոխ գրականությունը և՛ իր մեջ պարունակած պատմական տեղեկություններով (հաճախ՝ եզակի), և՛ իր գեղարվեստական ուշագրավ հատկանիշներով հայոց միջնադարի դպրության անկապտելի ու գիտական ավելի լուրջ ուշադրության արժանի մասն է հանդիսանում: Այն շատ կողմերով լրացնում, հարստացնում է մեր դպրության հույժ կարևոր հատվածը՝ պատմագրությունը կամ պատմական արձակի ժանրը: Տարակույս չկա, որ արդի գիտության բարձր պահանջների ոգով նրա առաջիկա համակողմանի հետազոտությունը՝ ինչպես պատմական (պատմագիտական) տեսանկյունով, այնպես էլ գեղարվեստական հայեցակետով նոր, ուշագրավ արժեքներ կ'հայտնաբերի հայոց հին և միջին դարերի գրականության մեջ: Այդ կարևոր գործը նոր նվիրյալ հետազոտողների կարիք ունի:

СОСТОЯНИЕ ИССЛЕДОВАНИЯ АГИОГРАФИЧЕСКОГО ЖАНРА НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ

Академик НАН РА В. С. НАЛБАНДЯН

Резюме

До последнего времени армянская агнографическая литература привлекала внимание специалистов лишь в источниковедческо-филологическом аспекте. Между тем, памятники этого жанра играли большую роль в деле национального художественного развития, исследование которого в литературоведческом плане является одной из важных проблем современного арменоведения. В научной разработке этой проблемы значителен вклад К. Тер-Давтян. В своих трудах, опубликованных на армянском и русском языках, ей удалось, успешно сочетая филологический и типологический метод, осветить наиболее важные вопросы истории и теории жанра. Особую ценность представляют удачные русские переводы памятников агнографической литературы, сделанные ею с древнеармянского оригинала. Весьма возможно, что богатый национальный материал данного жанра, как впрочем и вся древнеармянская литература, внесет интересные и существенные коррективы в теорию этого жанра и в теорию литературы вообще.